ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

ի պատասխան Ձեր 15.05.2025թ. գրության՝ տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետարանի ծրագրերով 2019-2024թթ. ներառյալ իրականացվել է թվով 2056 վերելակի փոխարինման աշխատանքներ: 2025 թվականի ծրագրերը նոր են մեկնարկվել և ընթացքի մեջ է թվով 121 վերելակի փոխարինման աշխատանքները:

Կից ներկայացվում է 2019–2024 թվականներին փոխարինված վերելակների վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ վարչական շրջանների՝ Աջափնյակ–157, Ավան-161, Արաբկիր–194, Դավթաշեն–185, Էրեբունի–107, Կենտրոն–273, Մալաթիա–Սեբաստիա–470, Նոր Նորք–274, Շենգավիթ–132, Քանաքեռ-Զեյթուն–103:

«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ վերելակներն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում են բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին, ուստի փոխարինման աշխատանքներից հետո ապամոնտաժված հին վերելակները հանձնվում են բազմաբնակարան շենքի կառավարման մարմիններին, որոնք իրականացնում են դրանց հետագա տնօրինումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ